

ՑԱՎԱԼԻ ԿՈՐՈՒՍՏ

Աշոտ Ս. Աբրահամյանի հիշատակին*



2021 թ. փետրվարի 10-ին՝ կյանքի 67-րդ տարում, վախճանվեց ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ **Աշոտ Ս. Աբրահամյանը**: Նա որդին էր անվանի հայերենագետ-լեզվաբան, ծնունդով արցախցի (Հադրութի շրջան, գ. Տումի) ակադեմիկոս **Սերգեյ Գ. Աբրահամյանի**:

Դեռևս նախորդ դարի 80-ական թթ. իր գիտամանկավարժական գործունեությունը սկսելով որպես հայերենագետ՝ Ա. Աբրահամյանն աստիճանաբար հակվում է դեպի ընդհանուրլեզվաբանական գիտակարգեր՝ զբաղվելով ընդհանուր լեզվաբանության, լեզվափոխակերպության, ընդհանուր և լեզվաբանական նշանագիտության հիմնահարցերի ուսումնասիրությամբ: Դեպի լեզվաբանական գիտություն Ա. Աբրահամյանի համար մուտքի հայտ էր նրա «Արսեն Այտընյանի լեզվաբանական հայացքները» մենագրությունը (Եր., 1984), որում դեռևս երիտասարդ լեզվաբանը անվանի հայագետի լեզ-

Վե՛ր համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) տարի, թիվ 1 (73), հունվար-մարտ, 2021

* Ընդունվել է տպագրության 16. 03. 2021:

վաբանական հայացքները քննում էր ոչ միայն իրենց ամբողջականության մեջ, այլև որոշակի հայեցակարգային մոտեցումով և, որ հատկապես կարևոր է, ընդհանուրլեզվաբանական լույսի ներքո: Հայերենագիտության, մասնավորապես՝ Ա. Այտընյանի հայերենագիտական հայացքների ընդհանուրլեզվաբանական տեսանկյունից կատարված քննությունը մենագրության հեղինակին հնարավորություն էր տվել բացահայտելու այն մեծ ծառայությունը, որ հայագիտությանը մատուցել է Եվրոպայի կենտրոնում՝ Վիեննայում ապրող և եվրոպական գիտության նվաճումների հաղորդակից մեծանուն գիտնականը: Ա. Աբրահամյանի վերոհիշյալ մենագրությունը, մեր կարծիքով, արժեքավոր է հատկապես վերջին առումով: Այլապես Ա. Այտընյան հայերենագետի լեզվաբանական հայացքները մինչ այդ էլ տարբեր մոտեցումներով ուսումնասիրվել էին այլ գիտնականների, այդ թվում՝ մեծավաստակ լեզվաբանների կողմից (Է. Աղայան, Գ. Ջահուկյան և ուրիշներ) և գնահատվել ըստ արժանվույն:

Եթե հայ լեզվաբանությունը հարուստ է արժեքավոր, անգամ կոթողային աշխատություններով, և այդ առումով ոչ միայն Ա. Աբրահամյանի, այլև շատ շատերի հայերենագիտական վաստակը դժվարությամբ կարող է քննություն բռնել, ապա նույնը չենք կարող ասել ընդհանուր լեզվաբանության, մասնավորապես՝ լեզվի տեսության և ընդհանուրլեզվաբանական վերոհիշյալ գիտակարգերի ոլորտներում հայ լեզվաբանների ստեղծած գիտական վաստակի առնչությամբ: Հայտնի է, որ նշված բնագավառներում մեր հեղինակավոր գիտնականներն էին պրոֆ. պրոֆ. Է. Աթայանը և Է. Ավետյանը: Ա. Աբրահամյանի լեզվափիլիսոփայական և լեզվանշանագիտական հետաքրքրությունները կարծես ինքնաբերաբար նրան մղել են դեպի այն ճանապարհը, որը հայ լեզվաբանության մեջ հարթում էին նշված գիտնականները: Մասնավորապես՝ դեպի Է. Աթայանի աշխատություններում ուրվագծվող հայեցակարգային աշխարհը, որը Ա. Աբրահամյանը դիպուկ բնորոշել է «Ընդգրկել անընդգրկելին» վերտառությամբ առաջաբանում¹: Նույնքան բնականորեն նա դառնում է հայ լեզվաբանական հանրության շրջանում հայտնի «աթայանական դպրոցի» ոչ մեծաթիվ ներկայացուցիչներից մեկը: Ա. Աբրահամյանի լեզվափիլիսոփայական և լեզվանշանագիտական հոդվածներից շատերը (հմնտ. «Նշանակիչի և նշանակյալի կրկնակի ներդաշնակումը լեզվում», «Ցուցանիշից խորհրդանիշին անցումը լեզվում», «Բառեր և իրեր», «Բառի նշանագիտական բնութագրություն», «Տեքստային տարածության հորիզոնները», «Ներակայություն և հավելուրդայնություն. լեզվական արտահայտման երկու բևեռները», «Բովանդակության և արտահայտության հակադրման հարաբերականությունը

1 Տե՛ս Աթայան Է., Հոգի և ազատություն, Եր., «Սարգիս Խաչենց», 2005:

լեզվում» և այլն) արժեքավոր ներդրումներ են այդ ոլորտներում: Նրա որոշ հոդվածներ հրապարակվել են օտարալեզու (անգլերեն, ռուսերեն) հեղինակավոր գիտական հանդեսներում՝ իրենց հեղինակին ճանաչում բերելով նաև հանրապետության սահմաններից դուրս:

Այն, որ Ա. Աբրահամյանի նման լեզվաբանը կարող էր մասնակցել դիմորդների համար մասնագիտական, տվյալ դեպքում՝ հայոց լեզվի և գրականության, ուղեցույցներ ստեղծելու աշխատանքներին, օրինաչափ է, բայց հազիվ թե կարելի է օրինաչափ համարել, երբ նա համահեղինակ է դարձել լեզվաբանությունից շատ հեռու մի գիտության՝ մաթեմատիկայի ոլորտում հանրակրթական (4–6 դասարանների) դասագրքերի: Ա. Աբրահամյանն այդպիսի ուշագրավ բացառություններից էր: Նա ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնում աշխատել է շուրջ երեք տասնամյակ, որոնցից վերջին քսան տարին հաստատապես ամբիոնի այն մասնագետներից էր, որոնց կարծիքը կարևոր էր գիտական հարցերի քննարկման ժամանակ: Մասնագիտական խոր և հիմնավոր գիտելիքները, որ ուներ Ա. Աբրահամյանը, նրա կարծիքը դարձնում էին ամենից պահանջվածներից մեկը: Ա. Աբրահամյանի անժամանակ մահով ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնում գոյացավ մի բաց, որը լրացնելու համար կպահանջվի տարիների համառ ու հետևողական աշխատանք:

Վարդան Զ. Պետրոսյան
Բանաս. գիտ. դոկտոր

Խմբագրության կողմից

Աշոտ Ս. Աբրահամյանի կորստով «ՎԷՄ» հանդեսը զրկվեց ոչ միայն լեզվափիլիսոփայական և լեզվանշանագիտական հոդվածների խորագետ հեղինակից, այլև ռուսերեն ամփոփագրերի՝ բժախնդրության հասնող բարեխիղճ թարգմանչից: Ու նաև՝ տոհմիկ հայից: Նա մի տոհմից էր, որը հայրենի գիտությանը տվել է հայր և որդի **Սերգեյ** և **Աշոտ Աբրահամյանների** նման գիտնականներ, իսկ Արցախ աշխարհի Դիզակ գավառին՝ Արցախյան ազատամարտում անմահացած **Էրիկ** և **Էմիլ Աբրահամյան** եղբայրներ:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Vardan Z. Petrosyan
Candidate of Sciences in Philology

REGRETTABLE LOSS
In memory of Ashot S. Abrahamyan

Вардан З. Петросян
Канд. филол. наук

ГОРЕСТНАЯ УТРАТА
Памяти Ашота С. Абрамяна

REFERENCES

At'ayan Ē., Hogi ev azatut'yun, Yer., "Sargis Khach'ents'" hrat., 2005 (**In Armenian**).